# ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**ԱԼԱ ԽԱՌԱՏՅԱՆ**
*բանասիրական գիտ. թեկնածու, ՄՄ*

## ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ» ԵՐԿՈՒՄ ՄԱՍՈՒՆՔԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» երկը հայագիտության մեջ ընդունված է անվանել պատմություն (history), սակայն այդ պատմությունը միշտ չէ, որ «history» է՝ որպես մեթոդաբանություն: Այն միջնադարի հայ մատենագրության հատկանությամբ երբեմն վերածվում է նարրատիվի, որի դեպքում փաստը թաքնվում է նարրատիվի հետեւում, ավելին՝ հանգուցվում է ավանդական երեւակայությանը, եւ այն մատուցվում է պատմական փաստի փոխարեն: Մ. Կաղանկատվացու երկի աշխարհաբար թարգմանության հեղինակ Վ. Առաքելյանը, խոսելով երկում առկա նմանատիպ հորինվածքների մասին, դրանք համարում է երկի լուրջ թերություն, սակայն դա այդպես կլիներ, եթե երկը լիներ զտարյուն պատմություն, ինչն այդպես չէ. «Սրբերի նշխարների գյուտերի նկարագրությունը, դավանաբանական վեճերի մեջբերումը, հրաշագործությունների պատմությունները եւ պատմության հետ կապ չունեցող այլ նյութերը խաթարել են Մովսես Կաղանկատվացու պատմական աշխատության բնույթը՝ դարձնելով այն մի քաղագրություն, մանավանդ եթե նկատի առնենք, որ հաճախ պատմության բուն շարադրանքի հետ չառնչվող այդ գրությունները խախտում են պատմու-*

*թյան ընթացքը, ընդմիջարկում են այն՝ զրկելով ընթերցողին պատմական անցքերի հետեւողական շղթան ընկալելու հնարավորությունից»*[1]*:*

*Մի կողմ թողնելով հետազոտողի՝ պատմությանը (history) տված գնահատականը, պետք է նշենք, որ սա ավանդական է այն առումով, որ ջատագովական վերաբերմունք ունի պատմության (history) նկատմամբ, եւ տեքստի այլ բնույթի որակները այդ տեսանկյունից ստորադասվում են: Սակայն իրականում երկի գրական արժեքը պայմանավորված է տարաբնույթ տեքստերի առկայությամբ եւ ոչ թե դրանցից մեկի գերակշռությամբ՝ անկախ «պատմություն» կոչվելու փաստից:*

*Տեքստի նման բնույթը գուցե երբեմն որոշ հետազոտողների համար պատմության փաստացիության տեսանկյունից կորցնում է իր նշանակությունը, կամ արժեքը նվազում է, սակայն մեզ համար դրանց տեքստային-գրական արժեքը կարեւոր է ու նշանակալից:*

*Շարադրանքում առկա պատմական փաստերին հարող այլ նյութերը՝ տեսիլները, հրաշապատումները, որոնց մեջ «պատմությունը» ներկա է գեղարվեստական պատմականությամբ, այսինքն՝ ոչ թե փաստի ճշմարտությամբ, այլ կենցաղի, աշխարհայացքի նմանության ճշմարտացիությամբ՝ որպես մետաֆոր, ունեն սուբկոդային արժեք, որոնք ներհյուսվում են պատմական կոդերին եւ լրացնում նրանց:*

*Ելակետ ընդունելով հետազոտողի այս երկու կարեւոր եզրակացությունները՝ փորձենք մեկնաբանել այդ երեւույթներն այլ տեսանկյունից:*

*Ինչպես կարելի է նկատել, Մովսես Կաղանկատվացու երկը, որպես միջնադարյան տեքստ, ենթարկվում է միջնադարի կրոնականացված տեքստերի կառույցներին ու որոշ տեղերում կրկնում սուրբգրային տիպը, եւ ասված պատմական ճշմարտությունը այս կամ այն կերպ հարմարեցվում կամ լրացվում է դրանով, այլ կերպ ասած՝ կրոնական պատումները պարզապես կեցության մետաֆորներ են, որոնց ապածածկագրումը իրականությունն է բացահայտում:*

*Մովսես Կաղանկատվացին Աղվանքի՝ որպես տեղանքի, պատմությունը սկսում է այդ տարածքում քրիստոնեության հաստատումով. փաստ, որը, որպես միջնադարի հավատացյալ մարդ, համարում է «նոր աշխարհի» համարժեքություն: Մինչ այդ եղածը այս դեպքում «չգոյություն» է, քանի որ «անօրէն դիցապաշտական» է: Սակայն փաստի հաղորդումը*

[1] **Մովսես Կաղանկատվացի,** Պատմություն Աղվանից աշխարհի, Թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Երեւան, 1969, էջ VIII-IX:

*նրան բավարար չի թվում, եւ այն լրացվում է սուբկոդերով, որոնք անպայման պիտի համապատասխանեցվեն Աստվածաշնչին:*

*Առաջին գլխում Երուսաղեմի առաջին հայրապետ՝ Քրիստոսի եղբայր Հակոբի կողմից հայրապետ ձեռնադրված Եղիշայի՝ Արեւելք գալը եւ այնտեղ եկեղեցի սկզբնավորելը, փաստորեն, պատմիչի համար պատմության սկիզբն է, քանի որ հենց այդ ժամանակից է սկսում քրիստոնեությունը տարածվել Աղվանքում, հետեւաբար, եւ միջնադարյան պատմիչի համար դա նոր աշխարհի ստեղծումն է: Հաջորդիվ տեքստն ունի Աստվածաշնչի հետ տիպականություն, որ պատմության ոլորտը չէ: Եղիշան նահատակվում է հեթանոսների ձեռքով եւ թաղվում մի փոսում, աստվածավախ մարդիկ նրա մասունքները գտնում են աստծո միջամտությամբ.* «*Ոչ էր պարտ ծածկել ճշմարտութեանն եւ ընդ փակմամբ լինել լուսոյ: Յետ բազում ժամանակաց երեւեալ երկիւղած արանց ոմանց տեսելեամբ գան միախումբ ժողով ի տեղի գբին եւ անդ տեսանեն ոսկերս յոգունս շեղջակուտեալս. եւ առհասարակ տարակուսեցան, սակայն հանին, դիզեցին եւ հսկեցին յաղաւթս զգիշերն զայն: Եւ եղեւ յառաւաւտուն շարժումն մեծ, մինչեւ որ անդն կային անկանել յերկիր: Եւ եկն հողմ սաստիկ յանապատէն, ցիր եւ ցան զանարբոցն հոսեաց զոսկերսն ընդ դաշտ ամենայն. եւ մնաց միայն ի տեղւոջն առաքելականն այն նշխարք, զորոյ զգլուխն միայն մեծահաւատ ոմն Ստեփաննոս քահանայ Ուռեկան գեղջ յափշտակեալ ի միջոյն, աճապարեալ յերիվար իւր՝ ի բաց գնաց: Եւ շարժեալ բազմութեանն զկնի նորա. մառախուղ խաւարային շանթիւք ընդ մէջ անցեալ զարհուրեցոյց զնոսա, որք դարձան ի բանակն»*[2]: *Աստվածային կամքն այստեղ դառնում է պատմության (history) բաղադրիչ, գործողությունների պատճառաբանություն եւ բացատրություն: Այստեղից սկսվում է մասունքների կարեւորման պատումների մի շարք, որոնք, որքան էլ դիտվել են ոչ պատմական եւ տեքստի պատմական արժեքը խաթարող, կարծում ենք, ուշարժան են, եւ դրանց վերլուծությունն այլ եզրակացության է հանգեցնում:*

*Հայ միջնադարյան մատենագրության մեջ լայն տարածում ունեն սրբերի մասունքների մասին պատմությունները, գտնելու, թաղելու եւ դրանց վրա շինություններ՝ սրբավայրեր կառուցելու մասին վկայություններն ու դրանց շուրջ հյուսված զրույցները: Մասունքների վրա կառուցված շինությունը Անդրե Գրաբարը անվանել է մարտիրիա*[3]: *Մասունքների վրա շինություն՝ մարտիրիաներ կառուցելու սովորությունը քրիստոնեական*

---

[2] **Մովսէս Կաղանկատուացի,** Աղուանից աշխարհի պատմութիւն, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ., Երեւան, 2011, էջ 41:

[3] **A. Grabar**, Martyrium: Recherches sur le culte des reliques et l'art chretien antique, Vol. I-II, Paris, 1943, p. 46.

*աշխարհում լայնորեն տարածվում է՝ սկսած 312 թվականից: Ըստ Անդրե Գրաբարի՝ այդ շինությունների ձեւը ծագում է հռոմեական գերեզմանոցային շինություններից՝ տապան-գերեզմաններից: Դրանք նախապես տարբերվում էին եկեղեցուց, սակայն սկսած Դ. դարից՝ դրանք սկսում են նույնացվել, որովհետեւ կա՛մ հենց եկեղեցին էր դառնում մարտիրիա՝ մասունքի վրա կառուցված շինություն, կա՛մ եկեղեցում՝ հիմնականում եկեղեցու խորանում, թաղվում էին մասունքները եւ դրանց վրա կառուցվում էին մարտիրիաներ՝ վկայարաններ*[4]*:*

*Մասունքների վրա շինություններ՝ վկայարաններ կամ եկեղեցիներ կառուցելու սովորույթը, ինչպես հայտնի է Ագաթանգեղոսի պատմությունից, ձեւավորվում է քրիստոնեության մուտքի ժամանակ, եւ առաջին այդ շինությունները կառուցվում են Հռիփսիմյան կույսերի մասունքների վրա: Հետագայում հայ միջնադարում ձեւավորվում են փոքր պատմություններ՝ կապված այս կամ այն եկեղեցու շինության հիմքում դրվող մասունքների գյուտի ու այդ մասունքներով եկեղեցին ավելի զորավոր դարձնելու իրադարձությունների հետ: Սա շատ բնորոշ է միջնադարին, քանի որ միջնադարյան մարդն ու հասարակությունը սեկուլարիզացված չեն (լատ. saecularis), կրոնականությունից ազատականացված չեն, այլ հակառակը՝ ապրում են դրանով, շարունակում փնտրել կրոնականն ու սրբազանը, որի ի հայտ գալը բացատրելու համար Մ. Էլիադեն շրջանառության մեջ է դնում հիերոֆանիա (hierophanie) եզրույթը, ինչը նշանակում է ինչ-որ սրբազան բան, որ ներկայանում է մեր առաջ: Ըստ էության, եզրակացնում է Էլիադեն, կրոնի պատմությունը՝ ամենապարզունակից մինչեւ ավելի կատարելագործվածները, ոչ այլ ինչ է, քան հիերոֆանիայի նկարագրություն՝ հայտնված սրբազան իրականության մեջ: Պարզունակ (ինչ-որ օբյեկտի՝ քարի կամ փայտի մեջ սրբազանի ի հայտ գալու) եւ բարձրակարգ հիերոֆանիայի միջեւ, ինչպիսին քրիստոնյայի համար Աստծո մարմնավորումն է Հիսուս Քրիստոսի մեջ, արտահայտվում է հաջորդականության ակնհայտ կապը: Երկու դեպքում էլ խոսքը խորհրդավոր արարքի մասին է՝ ինչ-որ «այնկողմնայինի», մեր աշխարհին չպատկանող ինչ-որ իրականության ի հայտ գալը մեր «բնական» աշխարհի, այսինքն՝ աշխարհիկ իրականության մաս կազմող առարկաներում*[5]*: Հենց այս հիերոֆանիայով էլ կարելի է բացատրել մասունքների մասին պատ-*

---

[4] Հայկական նմանատիպ հուշարձանների մասին տես **Վ. Գրիգորյան**, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երեւան, 1982:

[5] Տես **М. Элиаде,** Аспекты мифа, հետեւյալ հղումով՝ http://www.gumer.info/bibliotek:

*մություններն ու դրանցով որեւէ վայր սրբագործելու սովորությունը, որը, սակայն, երբեմն գործածվում էր այլ նպատակներով: Սրբազան տեղանքների ստեղծումը միջնադարի ուսումնասիրող Ալեքսեյ Լիդովը անվանում է հիերոտոպիա, որոնք ուսումնասիրում է երկու տեսանկյունից՝ որպես ստեղծագործական ձեւ եւ պատմական ուսումնասիրության առարկա*[6]*: Այս առումով մասունքներով տեղանքը սրբագործելու եւ նրա վրա կառույցներ ստեղծելու մասին մեր ունեցած պատմություններն իսկապես եւ՛ պատմության ուսումնասիրության համար կոդավորված հետաքրքիր նյութ են մատուցում, եւ՛ հետաքրքիր են որպես ստեղծագործական մտքի առկայություն՝ միջնադարի խորհրդաբանության համատեքստում:*

*Միջնադարյան հեղինակների գործերում, թվում է, թե այդ պատմություններն ունեն միայն կոլորիտային արժեք, այսինքն՝ բացատրվում են միայն կրոնականացված հասարակության արժեհամակարգով: Սակայն, իրականում երկի համատեքստի հետ կապված լինելով՝ դրանք սովորությունից (ինչ-որ չափով նաեւ ինքնանպատակայնությունից) բացի ձեռք են բերում գեղարվեստական-գրական եւ երկի գաղափարական, պատմական համատեքստում նաեւ քաղաքական ներունակություն:*

*Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմություն» երկում առկա են մասունքների հետ կապված մի քանի պատումներ, որոնց՝ երկի համատեքստում ունեցած գործառույթները կքննենք այս հոդվածում:*

*Նախ համառոտ վերաշարադրենք այդ պատմությունները՝ հընթացս վերլուծելու համար:*

*Մասունքների պատմությունները. ա) Ըստ Մ. Կաղանկատվացու՝ Աղվանից Վաչագան թագավորը մեծ փենչ ուներ՝ գտնելու Ս. Գրիգորիսի մասունքները: Հին վկայություններից իմանալով, որ Գրիգորիսի մասունքները նրա աշակերտները թաղել են Ամարասի մոտ, բայց վախենալով, որ այն կարող են հանել, ոչ մի նշանով ցույց չեն տվել դրանց գտնվելու հստակ վայրը: Նա խորհրդակցում է պալատական քահանայի հետ եւ որոշում՝ պաս պահելով ու աղոթքներով ապավինել Աստծո շնորհին: Թագավորը հրամայում է աղոթել ու պաս պահել՝ մասունքների գյուտի շնորհին արժանանալու համար: Երեք օր փառավոր կերպով տոնում են սրբերի հիշատակը, հետո Արցախի Դարահոջ գյուղից բերել է տալիս Գրիգոր Լուսավորչի, Հռիփսիմեի, Գայանեի մասունքները, որոնց ներկայությունը կարող էր օժանդակել մասունքները գտնելուն: Մասունքների որոնման ընթաց-*

[6] **Л. Алексей**, Иеротопия. Пространственные иконы и образы парадигмы в византийской культуре, Москва, 2009.

*քում տարբեր մարդիկ հուշող երգներ են տեսնում. Սուհառում Մատթե քահանան հայտնաբերված սրբերի պատվին պատարագ մատուցելու պահին արթմնի տեսիլ է ունենում, որտեղ նրան ուժգին ձայնն ասում է, որ մասունքները գտնվում են եկեղեցու արեւելյան կողմում: Արաժան գյուղում Հովել անունով մի պալատական սարկավագ երազում տեսնում է, որ Լուսավորիչն իրեն հուշում է Ամարասում գտնվող մասունքների հստակ տեղը, Հովելը տեսիլ է ունենում նաեւ Քարվեճ գյուղում: Այդ գյուղում Վաչագան թագավորը քնում եւ երազում ձայնի շնորհիվ իմանում է, որ Ամարասում ինչ-որ մեկին արդեն երեւացել է մասունքների գտնվելու տեղը: Նրա երազին լրացնում է Հովել քահանայի պատմածը, որ ինքը նույն տեղում տեսել է, թե ինչպես ակունքից դուրս է գալիս մի սակավաջուր աղբյուր եւ չափազանց հորդանում: Մեկ այլ տեսիլ տեսնում է Աղվանքի թագավոր Եսվաղենի ապօրինի որդի Խոճկորիկը Ցրիում: Տեսիլում նրան երեւում են յոթ մարդիկ, որոնցից մեկը Խոճկորիկին ցույց է տալիս ճեղքված հողակտոր, իսկ ճեղքի մեջ՝ վառված ճրագ, որի բոցերը, երկու մասի բաժանված, ձգվում են դեպի վեր: Այս տեսիլներից հետո բոլորը թագավորի գլխավորությամբ հավաքվում են Ամարասի մոտ եւ փորելով նրա շրջակայքը՝ փորձում են գտնել մասունքները: Նախապես դեպի հյուսիս են փորում եւ չգտնելով՝ հիասթափվում, սակայն երբ սրբերի մասունքները դնում են հորի վրա, այդ ժամանակ կարողանում են փորել դեպի արեւելք եւ գտնել մանուկ Գրիգորիսի մասունքները: Դրանց մեծ մասը թողնում են Ամարասում, գերեզմանի վրա Ս. Գրիգորիսի մատուռ հիմնարկում, իսկ մասունքների մյուս մասը տանում են թագավորական Դյուտական գյուղը, որ այնտեղ հանգիստ գտնեն: Այդ մասունքներից թագավորը բաժին է հանում նաեւ ժողովրդին[7] (Գիրք առաջին, Գլուխ Ի.-ԻԳ.):*

*բ) Մ. Կաղանկատվացին պատմում է նաեւ Արցախի Դիզափայտ (այժմ՝ Արցախի Զիարաթ) լեռան վրա գտնվող Կատարո վանքում ապրող Ս. Գրիգորիսի աշակերտների եւ մասքուԹների Սանեսան արքայի որդիների՝ Ս. Մովսեսի, Ս. Դանիելի, Ս. Եղիայի եւ նրանց հետ գտնվող երեք հազար ութ հարյուր յոթանասուն տղամարդկանց՝ Սանեսան արքայի կողմից սրի քաշվելու մասին: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ դեպքը տեղի է*

[7] Ըստ Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի Աղվանից կաթողիկոսների ցանկի՝ Ս. Գրիգորիսի մասունքների հայտնաբերումը տեղի է ունեցել 488 թվականին, իսկ ըստ Մխիթար Այրիվանեցու՝ 500-530 թվականներին: Տես **Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Էջմիածին, 2014, էջ 437:

*ունեցել Վաչագանի ժամանակ եւ Աղվանքի կաթողիկոս Աբասի հովվությունից առաջ*[8]*:*

*Նույն դրվագում Մովսես Կաղանկատվացին ասում է, որ Աբասի հայրապետության առաջին տարում Վեհիկ անունով մի անապատական քանիցս տեսիլ է ունեցել, որ բազում սրբեր խնդրում են եւ հորդորում գտնել իրենց մասունքները: Եվ որպես դրա իրագործում՝ Կաղսետում մասունքները փնտրելիս անուշ բույր են զգում եւ այդտեղից հանում են մասունքներն ու դնում թանկագին անոթների մեջ, իսկ Կաղսետը դառնում է առողջարար վայր (Գիրք երկրորդ, Գլուխ Զ.):*

*գ) Մի այլ դրվագում Մովսես Կաղանկատվացին գրում է, որ Հովսեփ անապատականը Գեղամա գավառի Բրտիայրայաց վանքից արաբների ասպատակությունների ու երկրի կացության վատթարացման պատճառով մեկնում է Արցախ գավառի Հղերկ գյուղի եկեղեցի: Նա ասում է, որ այդ վայրերում սրբերի մասունքներ չկային, եւ պատմում է, թե ինչպես են այդտեղ մասունքներ բերվում ու վկայարան կառուցվում: Մխիթար անունով մի անապատական մեկնում է Երուսաղեմ, այնտեղից վերադառնալիս մի բյուզանդացի գեղջուկից վերցնում է Ս. Գեւորգի ու Ս. Ստեփանոսի մասունքները, որոնք գեղջուկը պահում էր իր հարազատների համար (ընդգծումն իմն է՝ Ա. Խ.), սակայն քանի որ նրանք մահանում են, նա դրանք տալիս է Մխիթարին եւ հանձնարարում դնել իր երկրում՝ մի արժանավոր տեղում: Ճանապարհին Մխիթարը Տավրոս լեռան մոտ գտնվող Ս. Անդրեի վկայարանից խնդրում է նաեւ Անդրեի մասունքները եւ այս ամենն իր հետ բերում Արցախ: Հովսեփ անապատականը նրանից մասունքներ է խնդրում, որի համար Հղերկ գյուղում մի հյուսն իր որդու հետ վկայարան են կառուցում:*

*Հովսեփը ցանկանում էր նաեւ ստանալ Հովհաննես Մկրտչի նշխարները. այդ պատճառով գնում է Երուսաղեմ՝ երկրպագություն կատարելու, հետո վերադառնում է Գեղարքունի գավառի Պուհավանք, որտեղ պահված էին Հովհաննու մասունքները: Սրբի սպասավոր Գրիգորիկը, անսալով նրան, բացում է տապանակը, որտեղ պահված էին քրիստոնյա առաջին հայրերի ձեռքով Երուսաղեմից բերված Հովհաննես Մկրտչի, Ստեփանոս նախավկայի եւ Թոմաս առաքյալի մասունքները, որոնցից Հովսեփը վերցնում է ու բերում նույն վկայարան (Գիրք Երկրորդ, Գլուխ Ծ):*

---

[8] Ըստ **Հովհ. եպիսկոպոս Շահխաթունյանցի**՝ Աբասը հովվել է 552 թվականից, այսինքն՝ մինչեւ 552 թվականը:

*դ) Աղվանքի առաջին իշխան Վարազ-Տրդատը, որ իշխանության գլուխ էր անցել 683 թվականին, ցանկություն է ունենում Աղվանքում ունենալ Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները եւ դրա համար հայոց կաթողիկոսի ու Արարատյան գավառի իշխանի մոտ է ուղարկում Իսրայել եպիսկոպոսին. «Տուք, ասէ, ի նշխարաց սրբոյն Գրիգորի»[9]: «Ոչ երբէք ուրեք բաշխեալ են նշխարք սրբոյն Գրիգորի, եւ ոչ մեք ունիմք իշխանութիւն հանել մասն ի նմանէ եւ տալ քեզ»[10]: Սակայն Հեղինե իշխանուհու՝ «Մեծ Հայաստանի» տիկնոջ օգնությամբ ու միջնորդությամբ՝ Լուսավորչի ծնոտից միակամ տալիս են Աղվանքին. Իսրայել եպիսկոպոսը այն տանում է Աղվանք ու թաղում Գլխովանքում:*

*Մասունքների գյուտի պատմաքաղաքական ու կրոնական նպատակայնությունը. Դեռեւս առասպելաստեղծ ժամանակներից մարդկային հիշողության ու սովորութային հայացքներում պահպանվել է այն հավատամքը, որ մահացածների հոգին հանգիստ չի գտնում մինչեւ պատշաճ թաղվելը: Տեսիլներից մեկն ունի այդ այլաբանությունը՝ մենք դեռ տանջվում ենք: Սակայն վաղ միջնադարյան քրիստոնյա աշխարհայացքում մասունքների ներկայությունը որեւէ տարածքում սրբության առկայություն էր, որ խորհրդանշում էր Աստծո ներկայությունը. հանգամանք, որ օգտագործվել է պետության ու պետական այրերի կողմից նաեւ քաղաքական նշանակությամբ: Հիերոտոպիայի ուսումնասիրության մեջ Ալեքսեյ Լիդովը նշում է, որ «հիերոտոպիան՝ որպես գործունեության ձեւ, խորապես արմատավորված է մարդու բնույթի մեջ, որն իրեն ոգեղեն էակ գիտակցելու գործընթացում վերին աշխարհի հետ հարաբերվելու համար նախապես տարերայնորեն, իսկ հետո նաեւ իմաստավորված ստեղծում է կոնկերտ միջավայր»[11]: Այս հանգամանքը պահանջում է ավելի ուշադիր զննություն, որ թաքնված է մասունքների հայտնաբերման ցանկության հետեւում:*

*Մովսես Կաղանկատվացու երկում մասունքների գյուտի ու նրանց ունեցած դերի առումով կարեւոր է Գրիգորիսի մասունքների հայտնաբերումը եւ նրանց վերաթաղումը՝ Վաչագան Բարեպաշտ թագավորի ժամանակ: Հարց է առաջանում՝ ինչո՞վ էր պայմանավորված Վաչագան արքայի՝ մասունքները գտնելու մեծ տենչը, արդյո՞ք միայն կրոնական պատվախնդրությամբ, եւ ինչո՞ւ է Մովսես Կաղանկատվացին դա այդքան կարեւորում եւ այդ մանրամասներով ընդմիջարկում պատմության շարադրանքը:*

---

[9] **Մովսէս Կաղանկատուացի,** Աղուանից աշխարհի պատմութիւն, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ., էջ 300:

[10] Նույն տեղում:

[11] Այս մասին տես **А. Лидов**, նշվ. աշխ., էջ 10:

*Վաչագանն ըստ էության եղել է Աղվանից աշխարհի ամենահեղինակավոր իշխաններից մեկը, եւ նրա իշխանության ժամանակահատվածը (485-510 թթ.)*[12] *համընկնում է Հայոց երկրում եւ Աղվանից աշխարհում հաստատված խաղաղ ու համեմատաբար ինքնուրույն կարգավիճակի հետ: Ինչպես տեղեկանում ենք Մովսես Կաղանկատվացուց, Վաչագանը Աղվանքում բազմաթիվ բարեփոխումներ է անում՝ պայքարելով հեթանոսության մնացորդների ու աղանդների դեմ, վերականգնում ազնվականների իշխանությունը եւ երկրում հաստատում բարենպաստ պայմաններ:*

*Վաչագանի վարած ներքին քաղաքականության ու իր տարածքում իշխանության հզորացման հետ կապված քայլերում սկզբունքային էր նաեւ եկեղեցու հեղինակության եւ դերի բարձրացումն ու ամրապնդումը: «Աղվանից աշխարհի պատմություն» երկի հեղինակը նրան ներկայացնում է որպես կրոնի պաշտպան ու «հովանավոր»: Վաչագանը հաստատում է կրոնական կարգ: Այս առումով չենք կարող անտեսել նրա՝ կրոնական աշխարհընկալում ունենալը, որով նա հանդես է գալիս որպես կրոնի պաշտպան ու հովանավոր: Սակայն, մյուս կողմից, հոգեւորականության շահերը պաշտպանելով ու կրոնական կարգ հաստատելով՝ ձեռք է բերում պաշտոնական եկեղեցու հովանավորությունը եւ սրբերից ու Աստծուց հովանավորված դիտվում, ինչը բարձրացնում է նրա դիրքն ու պատիվը (այդ մասին տե՛ս ԻԶ. գլուխը):*

*Հայտնի է, որ Վաչագանի իշխանության ժամանակներում պարսիկներն ազատ կրոնի իրավունք են արտոնում Հայաստանում եւ Աղվանքում: Իսկ Վաչագանին անմիջապես նախորդած պատմական ժամանակահատվածում Աղվանքում չկար կրոնի ազատություն, քանի որ Հազկերտ Երկրորդի՝ զրադաշտության պարտադրանքը տարածվում է նաեւ Աղվանքի վրա: Այդ մասին Մովսես Կաղանկատվացին գրում է.* «Ի ժամանակս Յազկերտի ամբարշտի վառէր, բորբոքէր սատանայ ի միտս նորա բառնալ զքրիստոնեութեան կրօնս: Եհաս հրաման սաստկագոյն յաշխարհս Աղուանից՝ թողուլ զհաւատս եւ հնազանդ կալ մոգական աղանդոյն՝ կրակապաշտութեան»[13]: *Հազ-*

[12] Վաչագանի իշխանության ժամանակահատվածի մասին տարբեր թվեր են շրջանառվում: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ Վաչագանը իշխանություն ստանձնում է Վաչե Բ.-ից մոտ 30 տարի հետո: Դա մոտավորապես 490-491 թիվն է: Սակայն ըստ պատմագիտության վերջին ուսումնասիրությունների ու ճշգրտումների՝ Վաչագանի՝ Աղվանից մարզպանի պաշտոնի ստանձնումը եղել է Նվարսակի պայմանագրի կնքումից հետո՝ 485 թվականին: Այս մասին առավել մանրամասն տես **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, Երեւան, 2006, էջ 210-211:

[13] **Մովսէս Կաղանկատուացի,** Աղուանից աշխարհի պատմութիւն**,** Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ., գիրք Բ., գլ. Բ.:

*կերտի՝ կրոնափոխության հրովարտակը տարածվում էր ոչ միայն Հայաստանի, այլեւ Աղվանքի ու Վիրքի վրա: Մովսես Կաղանկատվացու վկայությամբ՝ երկիրը ենթարկվում է անլուր արհավիրքների. Աղվանքն ասպատակած պարսկական զորաբանակն ու մոգերը բազում ավերածություններ են անում երկրում, քանդում եկեղեցիներն ու ավերում սրբատեղիները կամ դրանք վերածում ատրուշանների: Ավարայրի ճակատամարտից հետո էլ Աղվանքում հանգիստ չէր. այնտեղ 457-461 թթ. հնգամյա պայքար է գնում պարսիկների դեմ, որից հետո Աղվանից թագավորությունը վերանում եւ վերածվում է մարզպանության[14]: Աղվանքի մարզպանության մեջ ներառվում են հայկական տարածքներ՝ Արցախ, Ուտիք նահանգները, սակայն, փաստորեն, բոլոր վարչական փոքր միավորները Աղվանքի մարզպանության կազմում եղել են տնտեսական ու քաղաքական ինքնուրույն միավորներ: Աղվանքի՝ պարսկական լուծը թոթափելու ճանապարհին մեծ էր 481-484 թթ. ապստամբության եւ Նվարսակի հաշտության դաշնագրի դերը: Այստեղ մեզ համար կարեւորը Աղվանքի՝ կրոնական բազմամյա արգելքներից ազատվելն էր, ինչը, փաստորեն, համընկնում է Վաչագան Բարեպաշտի թագավորության ժամանակահատվածին: Կրոնի ազատություն ստանձնելով՝ քաղաքական ու կրոնական ազատությունը ամրապնդելու համար Վաչագանը դիմում է կարեւոր քայլերի:*

*Եկեղեցու իշխանությունը եւ դրանով նաեւ թագավորի հեղինակությունը հզորացնելու գործում կարեւորագույն դեր կարող էր կատարել անվանի սրբերի մասունքներն այդ եկեղեցիներում թաղելը: Զարմանալի չէ, որ Վաչագան Բարեպաշտը փափագում էր գտնել Գրիգորիսի մասունքները, քանի որ ոչ այլ ոք, քան հենց նա էր հսկայական դերակատարում ունեցել Աղվանքի քրիստոնեացման գործում: Այս ամենից երեւում է, որ Վաչագանը եղել է բավականին հեռատես քաղաքական գործիչ եւ ժողովրդի մեջ էլ մնում է Բարեպաշտ մականունով՝ ժողովրդին ու եկեղեցուն՝ համապատասխանաբար հաճելի ու ձեռնտու կրոնական գործունեության համար: Այդ մասին եւս մեկ անգամ վկայում է մասունքների փնտրտուքին համընթաց կրոնական ծեսերի ու կարգերի անընդհատ հիշատակումը՝ պաս պահել, պատարագ մատուցել, սրբերի հիշատակը փառավոր կերպով տոնել եւ այլն: Սրանք պարտադիր քայլեր էին, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, նա պայքարում էր հեթանոսության մնացորդների*

[14] Մարզպանության առաջացման ու դրա աշխարհագրության մասին մանրամասն քննությունը տես **Հ. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 199-207:

*ու աղանդների դեմ, եւ կրոնական կարգ պահպանելն ու նորերը սահմանելը պարզապես անհրաժեշտություն էր:*

*Եթե այս ամենին նայենք «Աղվանից աշխարհի պատմություն» երկի ամբողջական գաղափարաբանության տեսանկյունից, ապա նկատելի է, որ սա երկի սկզբի ու մինչ Վաչագանը ընկած ժամանակահատվածի պատմական դեպքերի նկարագրության կարեւոր շարունակությունն է: Երկն սկսվում է աստվածաշնչյան ծննդաբանությամբ՝ Ադամից մինչեւ Նոյ եւ Նոյից սերող տարբեր ցեղերի ու ժողովուրդների նախահայրերը, Հաբեթից սերող հայերը, որի ժառանգներով էլ սկսում է Աղվանքի իշխանությունը: Սրանից անմիջապես հետո Մ. Կաղանկատվացին անդրադառնում է Աղվանքում քրիստոնեության մուտքին, որ կատարվել է շատ վաղ՝ Քրիստոսի առաքյալների շնորհիվ՝ Թադեոս առաքյալի՝ Արեւելք գալով եւ նրա մարտիրոսվելուց հետո Աղվանք եկած Եղիշայի կողմից: Մովսես Կաղանկատվացին երկի տարբեր հատվածներում՝ տարբեր ժամանակային կտրվածքներում, անընդհատ հիշեցնում է Աղվանքի ժողովրդի վաղ քրիստոնյա լինելը, առաջին հայրերի կողմից քրիստոնեացվելը եւ Հայաստանի հետ մի լինելը: Քաղաքական կարգավիճակով պայմանավորված՝ ինչ-որ չափով անտեսված ու նաեւ կրկին հեթանոսացված քրիստոնյաներին վերստին քրիստոնեացնելու, հնի մասին հիշեցնելու միտումը դառնում է Վաչագանի ներքին քաղաքականության շարժառիթը, իսկ հետագա գործիչների համար այդ քաղաքականությունը որդեգրվում է իշխանությունը, ինչ-որ չափով նաեւ եկեղեցու դաշնակցությունը պահպանելու համար:*

*Այս առումով պատմության համատեքստում առանցքային է Գրիգորիսի կերպարը: Աղվանքի Եկեղեցու հիմնարկման գործում նրա դերակատարությունը շատ մեծ է: Այդ մասին առաջին վկայություն տվող Փավստոս Բուզանդը գրում է, որ Գրիգորիսն այնտեղ քրիստոնեության տարածման մեծ նվիրյալ էր. բազում եկեղեցիներ կառուցեց ու նահատակվեց անօրենների ձեռքով: Մովսես Կաղանկատվացին գրեթե նույն բանն է ասում, բայց Գրիգորիսի մասին նրա տեղեկատվությունն ավելի շատ է: Այստեղ մեր նյութի ուսումնասիրության տեսանկյունից շատ կարեւոր են հենց Մ. Կաղանկատվացու նշած մանրամասները մասունքների վերաբերյալ. նա քարոզում էր ամբողջ Աղվանքում ու մկրտում ժողովրդին՝ իր հետ միշտ ունենալով սրբերի մասունքներ՝ Հովհաննես Մկրտչի հոր՝ Զաքարիայի արյունը եւ Ս. Պանդալիոնի մասունքները*[15]*: Միջնադարյան*

[15] Մովսես Կաղանկատվացու երկի աշխարհաբար թարգմանության մեջ Վ. Առաքելյանը Պանդալիոնի մասին ծանոթագրում է հետեւյալը. «Պանդալիոնը Աղվանքի արքա Վա-

*գրույցներում Պանդալիոնի կերպարի ու Քրիստոսի միջեւ նմանություն ենք գտնում՝ ընդհանուր արխետիպային հատկանիշից ելնելով: Նա եւս հայտնի էր իր հրաշագործություններով՝ վերակենդանացնում էր մեռածներին ու հեթանոսներին դարձի բերում*[16]*, ինչի համար էլ դասվում է նահատակված սրբերի շարքը: Քրիստոսի փրկչական առաքելությունը քրիստոնյա աշխարհում լայն տարածում էր ստացել միջնադարում, եւ հետագայում այն հյուսվում է շատերի վարքին: Համաքրիստոնյա ժողովրդական մտածողությունը Քրիստոսի գործունեությունն, ըստ էության, փորձում է իր համար «տեսանելի» դարձնել՝ մի կողմից՝ որպես նրա արածի իրական լինելու հաստատում, մյուս կողմից՝ իրեն ժամանակակից այլոց վարքում Քրիստոսին տեսնելու հնարավորություն՝ դրանով փորձելով իր արդիականության մեջ տեղափոխել աստվածաշնչյան իրականությունը: Այդ պատճառով քրիստոնյա աշխարհում շարունակում է ապրել ու հյուսվել փրկչական գործառույթով մարդկանց մասին առասպելությունը, այսինքն՝ տեղի է ունենում հավերժական վերադարձ՝ վերակրկնելու, վերստեղծելու այն ամենն, ինչը քրիստոնեական նախնականն էր, ի սկզբանե էր եւ միջնադարի համատեքստում՝ քրիստոնեական նախամոտիվ: Նման առասպելության առկայության մասին հետաքրքիր վկայություն ունի նաեւ Փավստոս Բուզանդը: Տարոնի Դանիել արքեպիսկոպոսի մասին, օրինակ, նա գրում է հետեւյալը.* «*Սա զարմանալի մարդ էր, մեծամեծ հրաշքներ էր գործում մեր տեր Հիսուս Քրիստոսի անունով: Առանց կոշիկները հանելու՝ ոտքով քայլելով անցնում էր գետերի ջրերի վրայով, ու կոշիկները չէին թրջվում: Ձմեռվա օրերին, երբ խոր ձյունը կուտակված, դիզված էր լինում լեռների վրա, եւ նա կամենում էր այսպիսի ժամանակ լեռներով ճանապարհորդել, ձյունը հանկարծակի ցամաքում էր նրա առաջ, սեւ հողը՝ բացվում: Եվ երբ կամենում էր մի հեռու տեղ գնալ, առանց նեղության ալանում անցնում էր փայլակի նման, կարծես թե թռչելով իսկույն այնտեղ էր լինում, ուր կամենում էր գնալ: Մեռելներին հարություն էր*

---

չագան Գ. Բարեպաշտ թագավորի որդին էր, որ նահատակվեց Կ. Պոլսի մոտ գտնվող Բյութանիա երկրի մայրաքաղաք Նիկոմիդիայում»: **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 279: Այս ծանոթագրությունը, կարծում ենք, ճշգրտման կարիք ունի, քանի որ ոչ թե Վաչագանի որդին է նահատակվել Բյութանիայի մոտ գտնվող Նիկոմիդիայում, այլ հռոմեացի կայսր Մաքսիմիանոս Օգոստոսի (260-311 թթ.) քրիստոնյահալած քաղաքականության հետեւանքով սպանված բժիշկ Պանդալեոնը (մոտավորապես Գ. դարի վերջ Դ. դարի սկիզբ):

[16] Այս մասին տես «**Վարք սրբոց**», Ս. Պանդալեոն - Ս. Կույս Քրիստոնիա, հ. Դ., գրաբարից թարգմանությունը՝ Արշակ Մադոյանի, Էջմիածին, 2010, էջ 5-19:

*պալիս, հիվանդներին բժշկում, եւ դեռ սրանցից ավելի մեծ հրաշքներ էր գործում, որ նույնիսկ գրով հնարավոր չէ նկարագրել»*[17]*:*

***Ըստ էության՝ Մ. Կաղանկատվացու բնութագրած Վաչագան Բարեպաշտի ժամանակը կարելի է համեմատել նախաքրիստոնեական ու քրիստոնեության նոր ընդունման ժամանակի հետ, երբ կարեւոր էին նոր կրոնի մասին լավագույն պատմություններով ու լեգենդներով մարդկանց գիտակցության վրա ազդելը, կրոնի ամրապնդումն ու կրոնական կարգի պարտադրանքը: Նույնը տեղի է ունենում Վաչագան Բարեպաշտի ժամանակ, քանի որ, ինչպես արդեն ասացինք, բավական երկար ժամանակ պարսկական բռնաճնշումների արդյունքում կրոնական ազատություն չկար, ապա ստանալով այդ ազատությունը՝ փորձում են նորից ազդել մարդկանց գիտակցության վրա եւ պատմականացնել քրիստոնեական առասպելությունը, կրկնել քրիստոնեացման փուլը: Այսինքն՝ այն ամենը, ինչ տեղի է ունեցել Քրիստոսի հետ, պատմականացվում է մի քանի շերտերով. նախ՝ պատմականացվել էր Քրիստոսը, իսկ արդեն միջնադարում որոշ պատմական դեմքերի վերագրվում է նրա արարքներից՝ փորձելով պատմականացնել այդ իրադարձությունները նաեւ իրենց ապրած ժամանակահատվածում: Սա յուրատեսակ կարոտախտ է Քրիստոսի ժամանակների նկատմամբ, եւ միջնադարյան հավատացյալ մարդը պարբերաբար կարիք է զգում ինքն իրեն դրա մեջ տեսնելու եւ հորինաստեղծում է այդ քրոնոտոպը՝ հավատալով նրա իսկությանը:***

***Այս առումով ուսումնասիրության համար բավական հետաքրքիր այլաբանություն ունի, օրինակ, Անդրեաս եւ Թոմաս առաքյալների, Հովհաննես Մկրտչի, Ստեփանոս Նախավկայի ու Ս. Գեւորգի մասունքների համատեղումը՝ Վաչագան Բարեպաշտից հետո՝ արաբական արշավանքների ժամանակ, երբ աղվանական եկեղեցին ու քրիստոնեությունը կանգնում են նոր վտանգի առաջ, եւ կրկին գլուխ են բարձրացնում աղանդավորությունը, հեթանոսական կրոնն ու կռապաշտությունը: Այդ չորս սրբերի մասունքների պահպանումն ու երկրպագությունը կատարվում է Կյուրեղ Երուսաղեմցու*[18] *հրահանգով (կարծում ենք՝ Կյուրեղ Երուսաղեմցու կարգի հիշատակումը պատահական չէ, քանի որ, սկսած Եղիշայի կողմից Աղվանքում քրիստոնեություն տարածման առաջին օրերից, Աղվանքի դարձը կատարվում է Երուսաղեմի կրոնական քաղաքականության ծրագրով եւ,***

[17] **Փավստոս Բուզանդ**, Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանցի, Երեւան, 1968, էջ 95:

[18] Վաղ միջնադարում հայտնի էր որպես հավատքի լավագույն ուսուցիչներից մեկը, ում վարդապետությունները լայն տարածում ունեին:

*ինչպես ցույց տվեցին մասունքների գյուտի ու հայտնաբերման տեսիլները, անգամ մեկնում էին Երուսաղեմ՝ այնտեղից մասունքներ ստանալու): Սրբերին միավորող հատկանիշը կրկին Քրիստոսին մոտ լինելն ու նրա արարքների որոշ կրկնությունն է, ինչպես նաեւ հեթանոսության, անհավատների դեմ կռիվն ու հանուն Քրիստոսի պայքարելը: Բացի այդ՝ հիշատակվում է նաեւ մի այլ հանգամանք՝ նրանք առաջին հայրերի ձեռքով են բերվել Հայաստան, որ կարող է նշանակել նաեւ առաջին քրիստոնյաների կողմից Աղվանքի վաղ քրիստոնեացվելը, որը քաղաքակրթական առավելության վավերականացումն է ու դրանով ստացած մշակութային հին իրավունքն ու համոզչականությունը: «Ստեփանոս Նախավկան անդրանիկ վկան է, որն իր նահատակությամբ նմանվում է Հիսուսին՝ ճանապարհ բացելով հետագա վկաների ու մարտիրոսների համար»[19]: Ինչպես հայտնի է Սուրբ գրքից, Ստեփանոս Նախավկան սպանվում է քարկոծվելով, նա Քրիստոսի առաջին աշակերտներից էր՝ աստվածային շնորհներով, զորությամբ եւ «ժողովրդի մեջ զարմանալի գործեր եւ մեծամեծ նշաններ էր անում» (Գործք Զ. 8):*

*Նման արարքով է հագեցած նաեւ Գ. դարում ապրած (նահատակվել է 303 թ.) Ս. Գեւորգի մասին վկայաբանությունը. «Քրիստոսի քաջամարտիկ մարտիրոսը, արի նահատակը, մարտիրոսների պարծանքի թագը եւ Քրիստոսի հաղթող զորականը», ինչպես Պետրոսը՝ բոլոր սուրբ առաքյալների գլուխն է, այնպես էլ Ս. Գեւորգը՝ գլուխն է բոլոր մարտիրոսների: Որովհետեւ երկու թագավորների՝ Դիոկղետիանոսի եւ Մաքսիմիանոսի եւ յոթանասուն դատավորների առջեւ յոթ ամիս վկայեց Քրիստոսի Աստվածությունը եւ երեք անգամ մահացավ կարծրագույն տանջանքներից, եւ դարձյալ կենդանացավ եւ հարություն առավ մեռելներից: Զորրորդ մահվամբ կատարելության հասավ եւ հանգեց ի Քրիստոս»[20]: Բացում հրաշագործություններ է անում Գեւորգն իր կենդանության օրոք, ինչպես նաեւ՝ մահվանից հետո, նրա անունով կառուցված եկեղեցին եւս զորավոր եկեղեցի էր ու գործառույթներով համընկնում է կենդանության օրոք Գեւորգի կատարած հրաշագործություններին: Այս առումով կարեւոր հուշում-մեկնաբանություն է նաեւ Ս. Գեւորգի պատկերագրությունը միջնադարյան արվեստում. «Առհասարակ բոլոր նշանաւոր սուրբ զօրավարներու պատկերները կը ներկայացուին ձիի վրայ եւ վիշապ մը սպաննելու դիրքին մէջ: Կրնա ըլլալ, որ անոնցմէ մէկը կամ միւսը արդարեւ նման քաջա-*

[19] «**Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան**», Երեւան, 2002, էջ 927:
[20] Այս մասին տես հետեւյալ հղմամբ՝ http://www.holytrinity.am/posts/view/670:

*գործութիւն մը ըրած ըլլայ, բայց այդչափը բաւական չէ, որ ան սուրբերու կարգը անցնէր: Այս պատկերները աւելի խորհրդանշական իմաստ ունին, քան պատմական: Վիշապը կը ներկայացնէ աշխարհի չարութիւնը, դիւական զօրութիւնը եւ բռնակալութիւնը, որոնց դէմ արդարեւ պայքարեցան Քրիստոսի այս քաջարի նահատակները անվախօրէն»*[21]*:*

***Ինչ վերաբերում է Անդրեաս առաքյալին, ապա նրա կերպարը շատ ավելի մոտ է Քրիստոսին, սակայն ուշագրավն այն է, որ նա համեմատվել է Հովհաննես Մկրտչի հետ. գործառույթներով նույնացվել կամ մոտեցվել են Մկրտչին, միաժամանակ՝ նրանք նաեւ ամենավաղ քրիստոնյաներն ու առաջին հավատացյալներն են: Համաքրիստոնեական միջնադարում Անդրեաս առաքյալի պատկերագրության մեջ նրա ու Հովհաննես Մկրտչի նույնանալու, կամ գործառույթներով նմանեցվելու հանգամանքը միշտ շեշտադրված է, եւ նա պատկերվում է Հովհաննես Մկրտչի նման ալեհեր ու գիսախռիվ: Նրա պատկերագրության մեջ էլ տեսնում ենք Հովհաննես Մկրտչի հետ նմանություն ու ինչ-որ գործառույթների զուգահեռ*[22]*: Համաքրիստոնեական ամենակարեւոր սրբերի համատեղումով ու նույնացմամբ եւ մասունքի առկայությամբ մեծ սրբազնություն է ձեռք բերում նաեւ այն եկեղեցին, որտեղ այն դրվում է: Անդրեասի ու Հովհաննես Մկրտչի նույնացումով աստվածայինը դրվում է նրանց մեջ, իսկ նրանց մասունքի առկայությունը որեւէ եկեղեցում՝ որպես ամենավաղ քրիստոնյաների, կրկնակի սրբազան է դառնում հավատացյալ մարդու հոգեբանական ընկալումներում:*

***Իր տեսակով Գրիգոր Լուսավորչի մասունքների ձեռքբերումը քաղաքական ու պետական նշանակություն ունի նաեւ Աղվանքի համար, ով Հայ Եկեղեցու սկզբնավորման առաջին սուրբն է, հետեւաբար՝ կրկին կապվում է Քրիստոսի ու առաջին քրիստոնյա լինելու հանգամանքին: Եվ, ինչպես ցույց է տալիս մեջբերումը, որ վերաբերում է Է. դարի դեպքերին, Գրիգորի մասունքները հայերի համար եղել են անձեռնմխելի, սակայն իշխանուհի Հեղինեի միջնորդությամբ բաժին է հանվում Աղվանքին. «Տուք զբաժին իմոյ աշխարհին եւ տան հաւր իմոյ ի մեծէն Գրիգորէ եւ կատարեցէք զխնդրուածս եպիսկոպոսին...»*[23]*: Աղվանքին բաժին տալու***

[21] **Շնորհք արք. Գալուստեան**, Համաքրիստոնեական սուրբեր, Երեւան, 1997, էջ 155-156:

[22] Անդրեաս առաքյալի պատկերագրության մասին տես Reallexikon zur Byzantinischen Kunst, Unter Mitwirkung von Marcell Restle, Herausgegeben von Klaus Wessel, B. I, Stuttgart, 1966, S. 154-155. **Otto Demus**, The mosaics of San Marco in Venice, V. I, The Eleventh and Twelfth Centuries, Volume two: Plates, 258 եւ 270 նկարները, Washington, D.C., 1984:

[23] Տես Մատենագիրք, նշված հատորը, էջ 300-301:

*այս ժեստով, ըստ էության, քայլ է կատարվում՝ սերտացնելու Աղվանքի ու Աղվանից Եկեղեցու հետ հարաբերությունները, որին, ինչպես տեսանք, նախանձախնդիր էր Աղվանից կողմը՝ հանձինս եպիսկոպոսի ու առաջին իշխան Վարազ-Տրդատի:*

*Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ մասունքների պաշտամունքի եւ դրանց վրա կառուցված շինությունների մասին պատումների ներառումը տեքստում ուներ մի քանի նշանակություն: Այն հղացքային առումով եւս ունի մի շարք կարեւոր ենթատեքստեր, որոնց քննությունից կարող ենք էական եզրահանգումներ անել:*

*Առաջինն այն է, որ մասունքների մասին պատումներն ավանդաբար պատմություն համարված տեքստերում ճիշտ չէ միայն պատմական հավաստիության տեսանկյունից քննելը, քանի որ դրանք կեցության եւ պատմական տեղեկությունների մետաֆորներ են, եւ ճշմարտությունը որոնելի է դրանց ներսում, այսինքն՝ կարեւոր է ոչ թե հավաստի տեղի ունեցած փաստն ինքնին, այլ դրա մեջ ներդրված ռեալությունը, մտքի ու աշխարհայացքի ենթատեքստային ճշմարտությունը:*

*Երկրորդ՝ այդ պատումները հետաքրքիր են որպես ստեղծագործական իրողություններ, որոնք բնորոշ էին կոնկրետ միջնադարյան ժամանակահատվածին եւ բացահայտում էին միջնադարի ստեղծագործական մտքի տեսակը եւ, որ կարեւորն է, ոչ թե աղճատում են պատմական նյութի շարադրանքը, այլ մետաֆորային պատումներով լրացնում, հարստացնում այն:*

*Երրորդ՝ մասունքապաշտության իրողությունների մանրամասն վերլուծությունը ցույց տվեց, որ այդ իրողությունը միտված էր քրիստոնեության համաժողովրդականացմանն ու խոր արմատավորմանը, որը իշխանների կողմից օգտագործվում էր ներքին ու արտաքին քաղաքականության նպատակներով:*

*Եվ վերջապես՝ մասունքների մեծ մասը վերակերտում, վերստեղծում է Քրիստոսի կերպարը տվյալ ժամանակահատվածում եւ հավատավոր մարդու մեջ ստեղծում Քրիստոսի ապրած ժամանակի կամ նրա հետ ժամանակակից լինելու մտապատրանք, այլ կերպ ասած՝ անընդհատ շրջանառվում է հավերժական վերադարձի արքետիպը:*

## РЕЗЮМЕ

В статье подвергаются текстуальному анализу культ реликвий, вопросы связанные с их обнаружением и сооружениями построенными на этих реликвиях в

работе "История Страны Алуанк" Мовсеса Каланкатваци. Эти повествования анализированы в историческом контексте, параллельно указывается, по каким политическим и идеологическим причинам они включены в текст, и каким образом дополняют факты истории. В этом смысле автор рассматривает типичные рассказы как метафоры бытия. В статье делаются следующие выводы. Во-первых, не следует анализировать рассказы о реликвиях с точки зрения исторических фактов, поскольку правда в них закодирована. Во-вторых, в этих рассказах важен не сам факт как таковой, а скрытая в них реальность, контекстная правда мысли и мировоззрения. Эти повествования важны так же как творческие реалии, типичные для конкретного времени и представляющие типы творчества средневековья. С другой стороны, анализ показывает, что существование культа реликвий, их обнаружение и особое захоронение, факт сооружения на них зданий, говорит об общенародности и глубокой фундаментализации христианской религии, что со стороны правителей использовалось с целью внутренних и внешних политических вопросов. И, наконец, большая часть этих реликвий воссоздает образ Христа, развивая в воображении религиозного человека иллюзию, что он является современником Христа. Другими словами, постоянно действует архетип вечного возвращения.

**SUMMARY**

The present article is devoted to textual analyses of the narratives concerning relic worshipping, their findings and constructions built on them reflected in the work “The History of Aghvan Country” by Movses Kaghankatvatsi. The narratives are discussed in historical context, besides parallel analyzing is provided which shows why such stories are included in the text from the political and conceptual view point and how they complete the factuality of the history. In this regard, such narratives are considered by the author as metaphors of being. Corresponding analyzes bring forward the following conclusions. Firstly the narratives concerning relics are not proper to discuss only from the angle of historical factuality, as the truth is only encoded in them. Secondly in those narratives not the fact itself is important, but the reality, sub-textual idea and world perception set inside. The narratives are also essential as creative facts typical to the certain period revealing the types of medieval creativity. The analyzes also shows that the fact of relic worshipping, their finding, special burials and constructions on them were tended to deepen Christianity and make it pan-national, which was used by the princes for internal and external policy. Finally, the great part of the relics recreated Christ’s image during the given period of time and created in the mind of the believer the illusion of being Christ’s contemporary. This means that the archetype of eternal return seems to be in constant rise.